



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ



ափայլել Պատկանյանի բանաստեղծությունների մեջ մի առանձին տեղ է գրավում նրա «Արաքսի արտասուքը», որ իր լիակշիռն ստեղծագործությամբ և գեղեցիկ ազդային բովանդակությամբ համարվում է նրա քերթվածների գլուխ-գործոցը:

Այդ ոտանավորը առաջին անգամ տպագրվել է հեղինակի ձեռքով «Գամառ-Քաթիկոսի» երկրորդ տետրակում: Դա գրված է 1854 թվին Մոսկվայում և նվիրված է Գեորգ Քանանյանին:

Մենք սակայն այդ հրաշալի բանաստեղծության մասին մի քանի մանր առումնասիրական սանլիքներ ունենք:— Նախ՝ ի՞նչպես է եղել Հայաստանի այդ գետի բուն հայկական անունը, երկրորդ՝ ո՞րտեղից է այն իր սկիզբն առնում, երրորդ՝ այդ բանաստեղծությունն ինքնուրույն գործ է, թե թարգմանություն, չորրորդ՝ ինչի՞ց է առաջ եկել հոռոմայեցոց կարծիքը այդ գետի մասին, թե այդ գետը իր վերա կամուրջ չի համբերում:

Պատասխանում ենք այդ հարցմունքներին:— Մեր ունեցած ամենահին հիշողությունը պահպանված է խորենացու պատմության մեջ: Նա այդ գետի մասին խոսելով, նրան անվանում է «Երասխա»: Պատշաճ է, որ մենք էլ գործածենք «Երասխա» անունը մեր գրականության մեջ:

Երասխն ունի զանազան անուններ. հռոմայեցիք անվանել են նրան «Արաքսոս», վրացիք՝ «Բասխի», արաբացիք՝ «Արազ» կամ «Բազ» և այլն: Ներկայումս ժողովուրդն ասում է «Արազ», և այդ անունն էլ ընդհանրացված է:

Ոտանավորի մի քառյակից՝

«Տուրք ջրի՛լ ամեն օր,
Իր սուր ծոցն Լռաբառ,
Մայրախրեամ ինձ սնունդ
Պարգևում է լիառատ»

Երևում է, որ հեղինակը թյուրիմացությամբ կարծել է, որ Երասխը իր սկիզբն առնում է Արաբառից, այնինչ մենք գիտենք, որ Երասխը իր սկիզբն առնում է Հայկական պարի Բյուրակնյան լեռների Սրմանց դաղաթից և տասը հազար հինգ հարյուր ոտանափ բարձրությունից թափվելով, դնում հասնում է Արաբառին իբրև արգեն բավակահին մեծ գետ:

Արաբառ սարը մի հսկայական մեծությունով զանգված է, որ ձմեռը հավաքում է իր վերա շատ ձյուն, բայց ինքը շոք ու ցամաք սար է: Նրա թեքվածներից և սառցաբաններից ոչ մի մեծ գետ չի բխում, այլ էրեք մեծ առուներ, ձմեռները սակավաջուր, մյուս եղանակներին առատաջուր, որոնք կոչվում են Առաջին Սև-ջուր, երկրորդ Սև-ջուր և երրորդ Սև-ջուր, աղբյուրներն՝ Օկա-սուտներ, որոնք և թափվում են Երասխի մեջ:

Էջմիածնի միաբան Կյուրեղ վարդապետ Սրապյանը ասում էր և պնդում, որ Թափայկ Պատկանյանի «Մայր Արաքսի» թարգմանությունն է մի արաբական ոտանավորից, որ գրված է Եգիպտոսի Նեղոս գետի մասին: Բաշխի Իշխանյանը իր «Հասարակական գաղափարները Թափայկ Պատկանյանի և Ս. Շահազիզի բանաստեղծությունների մեջ» գրքում մեջ է տնդում վրաց բանաստեղծ Բաբադաշվիլու (1816—1845 թ. թ.) մի ոտանավորը, որ իր գլխավոր մտքովով այնքան նման է, այնքան հիշեցնում է մեր «Մայր Արաքսին», որ կարծել է տալիս, որ դա նրա

նմանությունն է՝ Մեջ ենք լերում ախտեղ
այդ ոտանավորը.

По берегу реки (Куры) я шел тоской
томимый,
От гнета тяжких дум забвенья там
искал.
И волю дав слезам, присев на холм
любимый.
Безмолвным берегам я скорбь души
вверял
В раздумьи молил я: проснись река
родная!
Живой свидетель ты событий
вековых,—
Так пусть расскажет мне волна твоя
седа
О скорби прошлых дней, о подвигах
былых.

Մենք ափերդ չենք համարում մեջ լերել
այստեղ և մի աղբյուրանական ոտանավորի
հատված, որ տվել է մեզ հանգուցյալ Ստե-
փանոս Նաղարյանը, որ նույնպես հիշեցնում
է մեր «Մայր Արաքսի»-ն: Ափսոս միայն, որ
հատված է. չհաջողվեց մեզ գտնել դրա մյուս
մասերը.

«Արագա սալերմ բեշդի,
Արագ բուլբուլի, գեշդի:
Արա՛գ, գյա՛լ իսպաղ էլլա՛,
Հա՛նսը ցյուճում խոշ գեշդի»:

(«Արագը ձգեցի լվացի կոճխ,
Արագը պլտուրվեց, անցավ գնաց:
Արա՛գ, արի վկայի՛ր,
Իմ ո՛ւր մի օրը լավ անցավ գնաց»):

Մենք սակայն կարծում ենք, որ մեր «Մայր
Արաքսի»-ն մի բոլորովին ինքնուրույն երկ է.
դրա նմանությունը Բարադաշվիլու կամ Ե-
փպտոսի ոտանավորներին դեռ ապացույց
չի կարող համարվել մեկի մյուսներից փո-
խառնություն լինելուն: Նմանությունը գրակա-
նության մեջ երկու տեսակ է լինում— նմա-
նություն փոխառության մտքով և նմանու-
թյուն առանց փոխառության: Երկու բա-
նաստեղծ իրար անձանիթ, իրարից շատ հե-
ռու ապրող, կարող են նման ոտանավորներ
գրել, երբ նրանք ապրում են միևնույն խո-
հերով, հոգսերով, ցավերով: Թարգմանու-
թյան մասին խոսք էլ չի կարող լինել. Թա-
փայել Պատկանյանը Եփպտոսում չի եղել,
արաբներն էլ չգիտեին...

Վրաց պատմական կյանքն այնքան նման
է հայերի պատմական կյանքին, որ բոլորո-
վին հասկանալի պիտի լինի, որ նրանց
բանաստեղծները միևնույն տեսակ ոտանա-
վորներ են գրել: Կարծես բնությունն էլ միա-
վորել է նրանց իրար հետ: Երասխը հոսելով
Արարատյան դաշտով, հավաքելով իր մեջ
Հայաստանի գետերը, դառնալով Անգրկով-
կասի երկրորդ մեծ գետը, անցնում է սահ-
մանը, խառնվում է Քուրի հետ և նրա հետ
միասին դիմում են դեպի Կասպից ծովը:

Ի՛նչպես պետք է հասկանալ, որ Երասխն
իր վերա կամուրջ չի համբերել, իր վերա կա-
մուրջ չի ուղեցնել ունենալ:

Երասխը ահագին բարձրությունից թափ-
վելով ցած, իր ջրերի հետ սրբում բերում է
շատ ավազ ու տիղմ, որով տարիների բն-
իացքում այնքան շատանում են, որ կազ-
մում են նրա հոսանքի առաջ կիտուկ-կիտուկ
խումբեր և արգելում են դեպի ազատ հո-
սանքին: Ահա դրա հետևանքով է լինում, որ
գետը, իր առաջ ազատ հոսանքի ճանապարհ
չգտնելով, ցածափնյա տեղերում դուրս է գա-
լիս իր սովորական հունից և ուրիշ տեղերով
հոսում:

Հնադույն անցյալում Լդել են դեպքեր, երբ
գետն երբեմն ընդմիջտ թողել է իր հին հու-
նը և նոր հուն գտել իր համար, և հիմ հու-
ները մնալով առանց ջրի, չորացել են, ցա-
մաթել և կոշվել: Ցամաք-Արագ, աղբյուրա-
ներեն՝ Ղուռու-Արագ, Այգպիսի Ղուռու-Ա-
րագներից մեկը կարելի է տեսնել էփշիար և
Զիբուխլու գյուղերի մեջտեղում, մյուսը՝
Հախվերին գյուղի հողերում և երրորդը՝
Ղաուղղշլաղ գյուղի մոտ. իսկ ամենահին
մասին խոսում է Մովսես Խորենացին:
— Երվանդ թագավորի օրով,— պատմում է
նա,— արքունիքը տեղափոխվեցավ Արմա-
վիր կոչված բլրից, որովհետև Երասխ գետը
հեռացել էր, և ձմեռն երկար տևելիս, հյու-
սիսային քամու փչելուց ջուրը սառչում պըն-
դանում էր, և չէր կարելի բավական ջուր
գտնել թագավորական քաղաքի համար: Եր-
վանդը դրանից նեղվելով, նաև առավել ա-
մուր տեղ որոնելով, տեղափոխեց իր արքու-
նիքն արևմտյան կողմը մի ժայռաբլրի վերա,
որի շուրջը գալարվում էր Երասխը, և որի
դեմ հոսում էր Ախուրյան գետը, և այլն:

Այս բոլորից, ուրեմն, պիտի հասկանալի
դառնա և հոռմայեցոց ասածը՝ ինչո՞ւ պետք
է կամուրջ շինել Երասխի վերա, քանի որ
նրա վերա շինած կամուրջը կարող է ցա-
մաքի վերա մնալ: Մենք, գոնե, այսպես ենք
հասկանում:

